

Կ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ

ՅԵՎ

ԽՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԶԵՐԵՎԱՆ • 1989

31 JAN 2018

Պրակտիկայի քաղաքականության, միացե՛ք

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ
ՅԵՎ
ԽՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների խորհրդի Նախագահ
և Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսար
Ընկ. Վ. Մ. ՄՈՂՈՏՈՎԻ գեկուցումը ԽՍՀՄ Գերագույն
խորհրդի Յերրորդ Սեսիայում 1939 թ. մայիսի 31-ին

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939



11-2853699

О МЕЖДУНАРОДНОМ ПОЛОЖЕНИИ
И ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ СССР

Доклад Председателя Совета Народных Комиссаров СССР
и Народного Комиссара Иностранных Дел тов. В. М. МОЛОТОВА
на Третьей Сессии Верховного Совета СССР 31 мая 1939 года

Армполитиздат, Ереван

Ընկե՛ր ղեկուսատներ: Դեպուսատներէ առաջարկը՝
Գերագույն Խորհրդի Սեփայում լսել Արտգործո՞ղկումատի
Հաղորդումը, — միանգամայն հասկանալի յի: Վերջին ժա-
մանակներս միջազգային իրադրութեան մեջ լուրջ փոփոխու-
թյուններ կատարուեցին: Այդ փոփոխութեանները, խաղա-
ղասեր տերութեաների տեսակետից, զգալիորեն վատթա-
րացրին միջազգային դրութեանը:

Այժմ մենք գործ ունենք մի կողմից, ազրեսսիւ պե-
տութեաների քաղաքականութեան և, մյուս կողմից, դեմո-
կրատական յերկրների չմիջամտելու քաղաքականութեան
ակնհայտ արդեւոյնքների հետ: Ազրեսսիւ յերկրների ներկա-
յացուցիչները դեմ չեն այժմ պարծենալու ազրեսսիայի քա-
ղաքականութեան արդեն ձեռք բերած արդեւոյնքներով: Ինչ
ասես չասես, բայց այստեղ պարծենկոտութեան պակասու-
թյուն չի նկատուում (ուրախ աշխուժութիւն դաւիլիմում):
Դեմոկրատական յերկրների ներկայացուցիչները, վորոնք յի-
րես են դարձրել կոլեկտիւ անմտանգութեան քաղաքականու-
թյունից և վարում են ազրեսսիային չդիմագրելու քաղաքա-
կանութեան, աշխատում են նվազեցնել միջազգային իրա-
դրութեան մեջ տեղի ունեցած վատթարացման նշանակու-
թյունը: Նրանք մինչև այժմ եւ դեռ զրադված են զլիսալի-
րապես հասարակական կարծիքը «հանգստացնելով», այն-
պես ձեռացնելով, թե վերջին ժամանակներս ելական վոչ մի
րան չի կատարուել:

Խորհրդային Միութեան դիրքը՝ միջազգային կյանքի
ընթացիկ դեպքերի դնահատման մեջ՝ տարբերվում է թե՛
մեկ և թե՛ մյուս կողմի դիրքից: Նրան, ինչպես հասկանալի
յի յուրաքանչյուրին, վոչ մի դեպքում չի կարելի կասկածել
ազրեսսորների վորեւ համակրանք ցուցաբերելու մեջ: Նա
հեռու յի նաև իրոք վատթարացող միջազգային դրութեանը
վորեւ կերպ կոծկելուց: Մեզ համար պարզ է, վոր միջազ-

գային զբոլթյան մեջ տեղի ունեցած իրական փոփոխությունները հասարակական կարծիքից թաքցնելու փորձերին անհրաժեշտ է հակադրել փաստեր: Այն ժամանակ ակնհայտ կդառնա, վոր «Հանգստացուցիչ» ճառերն ու հողավածները հարկավոր են միմիայն նրանց, ովքեր չեն ուզում խանգարել ագրեսսիայի հետագա զարգացմանը, հույս ունենալով ուղղել ագրեսսիան, այսպես ասած՝ ավելի կամ պակաս «ընդունելի» ուղղությամբ:

Դեռ վերջերս Անգլիայի և Ֆրանսիայի հեղինակավոր ներկայացուցիչներն աշխատում էին հանգստացնել իրենց յերկրների հասարակական կարծիքը, փառաբանելով չարաբաստիկ մյուսխենյան համաձայնության հաջողությունները: Նրանք ասում էին, թե Մյունխենի սեպտեմբերյան համաձայնությունը կանխեց յեվրոպական պատերազմը՝ Չեխո-Սլովակիայի կողմից կատարված համեմատաբար վոչ այնքան ել մեծ զիջումների միջոցով: Շատերին այն ժամանակ ել թվում եր, թե Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, ի հաշիվ Չեխո-Սլովակիայի՝ Մյունխենում իրենց արած զիջումների մեջ ավելի հեռու յեն գնացել, քան նրանք իրավունք ունեին դրա համար: Մյունխենյան համաձայնությունը չմիջամտելու քաղաքականության այսպես ասած գաղաթնակետն եր, ագրեսսիվ յերկրների հետ համաձայնության գալու գաղաթնակետը: Իսկ ի՞նչպիսի արդյունքների հասցրեց այդ քաղաքականությունը: Արդյոք մյունխենյան համաձայնությունը դադարեցրե՞ց ագրեսսիան: Բնավ վոչ: Ընդհակառակը, Գերմանիան չսահմանափակվեց Մյունխենում իր ստացած զիջումներով, այսինքն՝ Սուդետյան չրջաններն ստանալով, վորտեղ բնակվում են գերմանացիներ: Գերմանիան ավելի հեռու գնաց, պարզապես վերացնելով սլավոնական խոշոր պետություններից մեկը՝ Չեխո-Սլովակիան: 1938 թ. սեպտեմբերից, յերբ տեղի ունեցավ մյունխենյան խորհրդակցությունը, քիչ ժամանակ է անցել, իսկ 1939 թ. մարտին Գերմանիան արդեն վերջ տվեց Չեխո-Սլովակիայի գոյությանը: Գերմանիային այդ հաջողվեց կատարել առանց վորեւ կողմի հակադրոծության, այնքան հարթ, վոր հարց է ծագում, թե իրոք վո՞րն է յեղել Մյունխենի խորհրդակցության իսկական նպատակը:

Համենայն դեպս Չեխո-Սլովակիայի լիկվիդացիան, հալածակ մյունխենյան համաձայնության, ամբողջ աշխարհին ցույց տվեց, թե ինչի յե հանդեմ չմիջամտելու քաղաքականությունը, վորը Մյունխենում, կարելի յե ասել, հոռավ իր բարձրագույն կետին: Այդ քաղաքականության տապալումն ակնհիւ դարձավ: Այնինչ, ագրեսսոր-յերկրները չարունակում էին պահպանել իրենց քաղաքականությունը: Գերմանիան Լիտվայի հանրապետությունից խլեց Մեմելը և Մեմելի մարզը: Ինչպես հայտնի յե, Իտալիան նույնպես պարտքի տակ չմնաց: Ապրիլ ամսին Իտալիան վերջ տվեց անկախ պետություն՝ Ալբանիային:

Դրանից հետո դարմանալի վոչինչ չկա, վոր գերմանական պետության ղեկավարը ապրիլի վերջերին իր արտասանած ճառերից մեկում վոչնչացրեց միջազգային յերկու կարևոր պայմանագիր՝ Գերմանիայի ծովային համաձայնագիրը Անգլիայի հետ և Գերմանիայի ու Լեհաստանի միջև կնքված Հարձակվելու պակտը: Իր ժամանակին այդ պայմանագրերին միջազգային մեծ նշանակություն եր տրվում: Սակայն, Գերմանիան շատ պարզ կերպով այդ պայմանագրերի հետ հաշիվ տեսավ, առանց վորեւ ձևականության հետ հաշիվ նստելու: Այս եր Գերմանիայի պատասխանը Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Ռուզվելտի խաղաղասիրության վոգով համակված առաջարկին:

Բանը միջազգային յերկու պայմանագրեր խզելով չսահմանափակվեց: Գերմանիան և Իտալիան ավելի հեռու գնացին: Որերս հրապարակվեց նրանց միջև կնքված ռազմաքաղաքական պայմանագիրը: Այդ պայմանագիրն իր հիմունքում հարձակողական բնույթ ունի: Այդ պայմանագրի համաձայն, Գերմանիան և Իտալիան պետք է ոժանդակեն միմյանց այդ յերկրներից մեկի սկսած բոլոր ռազմական դործողություններում, ներառյալ ամեն տեսակ ագրեսսիան, ամեն տեսակ հարձակողական պատերազմը: Դեռ բոլորովին վերջերս Գերմանիայի և Իտալիայի մերձեցումը քողարկվում եր, իրեւ թե, կոմունիզմի դեմ միատեղ պայքարելու անհրաժեշտությամբ: Դրա համար քիչ աղմուկ չբարձրացրին այսպես կոչված «Հակակոմիստերական պակտի» շուրջը: Հակակոմիստերական աղմուկը իր ժամանակին վորոշ դեր

խաղաց ուշադրութիւնը չեղելու համար: Այժմ արդեն ագրեսսիւնները հարկ չեն համարում վարադուրի հետե թաղներով: Գերմանիայի և Իտալիայի միջև կնքված ռազմա-քաղաքական պայմանագրում արդեն մոտ մի ձայն չկա Կոմինտերնի դեմ պայքարելու մասին: Դրա փոխարեն Գերմանիայի և Իտալիայի պետական զորքերին ու մամուլը վորոշակի ասում են, թե այդ պայմանագրին ուղղված և հատկապես յեվրոպական զլխավոր դեմոկրատական յերկրների դեմ:

Կարծեմ պարզ և, վոր բերված փաստերը վկայում են միջազգային իրադրութիւն լուրջ վատթարացման առկայութիւն մասին:

Այդ կապակցութեամբ Յեվրոպայի վոչ-ադրեսիւ յերկրների քաղաքականութեան մեջ ևս վորոշ փոփոխութիւններ ուրվագծվեցին ադրեսիւային հակադրոճելու ուղղութեամբ: Թե վորքան լուրջ են այդ փոփոխութիւնները՝ մենք դեռ կտեսնենք: Առայժմ դեռ չի կարելի նույնիսկ ասել, թե արդյոք այդ յերկրները լուրջ ցանկութիւն ունենհան հրաժարվելու չմիջամտելու քաղաքականութեանից, ադրեսիւային հետագա ծավալմանը չդիմադրելու քաղաքականութիւնից: Արդյոք այնպես չի՞ պատահի, վոր միքանի շորջաններում ադրեսիւան սահմանափակելու նկատմամբ այդ յերկրների ունեցած ձգտումը խոչընդոտ չհանդիսանա այլ շորջաններում ադրեսիւային ծավալմանը: Այսպիսի հարցեր են դրվում նաև արտասահմանի բուրժուական մամուլի միքանի օրգաններում: Ուստի մենք պետք և զգաստ լինենք: Մենք կանգնած ենք խաղաղութեան գործի կողմը և ադրեսիւային հետագա ծավալումը թույլ չտալու կողմը: Բայց մենք պետք և հիշենք ընկեր Ստալինի առաջադրած գրույթը՝ «Զգուշութիւն պահպանել և թույլ չտալ, վոր պատերազմի պրոպակատները, վորոնք սովոր են ուրիշի ձեռքերով կրակից շագնակներ հանել, մեր յերկրը քաշեն կոնֆլիկտների մեջ»: Միմիայն այդ դեպքում մենք կկարողանանք մինչև վերջը պաշտպանել մեր յերկրի շահերը, համընդհանուր խաղաղութեան շահերը:

Մակայն, կան մի շարք նշաններ, վոր Յեվրոպայի դեմոկրատական յերկրներում ավելի ու ավելի գալիս են այն

գիտակցութեան, թե չմիջամտելու քաղաքականութիւնը տապալվում և, գալիս են այն գիտակցութեան, վոր անհրաժեշտ և ավելի լրջորեն միջոցներ և ուղիներ վորոնել ագրեսիւային դեմ խաղաղասեր տերութիւնների միասնական ճակատ ստեղծելու համար: Այնպիսի յերկրում, ինչպիսին և Անգլիան, սկսեցին բարձրագոյն ճառեր լսվել, թե անհրաժեշտ և կտրականապես փոխել արտաքին քաղաքականութիւնը: Մենք, իհարկէ, հասկանում ենք բանավոր հայտարարութիւնների և իրական քաղաքականութեան տարբերութիւնը: Բայց և այնպես չի կարելի չնշել, վոր այդ ճառերը պատահական չեն: Ահա միքանի փաստեր: Անգլիայի և Լեհաստանի միջև փոխադարձ ոգնութեան պակտ գոյութիւն չունեն: Այժմ այդ պակտի մասին վորոշում ընդունվել և: Այդ համաձայնութեան նշանակութիւնը միայն ուժեղանում և նրանով, վոր Գերմանիան խզեց Լեհաստանի հետ իր կրնքած չհարձակվելու պակտը: Զի կարելի չընդունել, վոր Անգլիայի և Լեհաստանի միջև կնքված փոխադարձ ոգնութեան պակտը փոփոխութիւն և մոցնում յեվրոպական իրադրութեան մեջ: Կամ, այնուհետե: Անգլիայի և Թյուրքիայի միջև փոխադարձ ոգնութեան պակտ չկար, վերջին ժամանակներս Անգլիայի և Թյուրքիայի միջև փոխադարձ ոգնութեան վորոշ համաձայնութիւն արդեն կայացել և: Այդ փաստն էլ իր փոփոխութիւնն և մոցնում միջազգային իրադրութեան մեջ:

Այս նոր փաստերի կապակցութեամբ, վերջին ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկը պետք և համարել վոչ-ադրեսիւ յեվրոպական տերութիւնների ձգտումը՝ համադրոճակցութեան ներգրավել ԽՍՀՄ-ն ադրեսիւային դիմադրութիւն ցույց տալու գործում: Հասկանալի յե, վոր այդ ձգտումն արժանի յե ուշադրութեան: Յեննելով դրանից, Խորհրդային Կառավարութիւնն ընդունեց Անգլիայի և Ֆրանսիայի առաջարկը՝ բանակցութիւններ վարելու մասին, վորոնց նպատակն է՝ ամրացնել ԽՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև յեղած քաղաքական փոխադարձ հարաբերութիւնները և հաջողեցնել խաղաղութեան ճակատը ագրեսիւային հետագա ծավալման դեմ:

Ի՞նչպես ենք վորոշում մենք մեր խնդիրները ժամանա-

կազմից միջազգային իրադրության մեջ: Մենք գտնում ենք, վոր նրանք ընթանում են մյուս վոչ-ազդեցիկ յերկրների չահերի գծով: Դրանք կայանում են նրանում, վոր կանգնեց-նենք ազդեցությանի հետագա զարգացումը և դրա համար ստեղծենք վոչ-ազդեցիկ պետությունների վստահելի ու եֆեկտիվ պաշտպանական ճակատ:

Անգլիական ու ֆրանսական կառավարությունների մեղ արած առաջարկությունների կապակցությամբ՝ Խորհրդային Կառավարությունը բանակցություններ սկսեց վերջիններիս հետ ազդեցությանի դեմ պայքարելու անհրաժեշտ միջոցների վերաբերյալ: Այդ դեռ ընթացիկ տարվա ապրիլի կեսերին եր: Այն ժամանակ սկսված բանակցությունները դեռ չեն վերջացել: Սակայն դեռ այն ժամանակ կարելի յեր տեսնել, վոր յեթե իրոք ուղում են խաղաղասեր յերկրների գործու-նակ ճակատ ստեղծել ազդեցությանի հարձակման դեմ, ապա դրա համար անհրաժեշտ է առնվազն այսպիսի պայմաններ՝ Անգլիայի, Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի միջև կնքել բացառապես պաշտպանական բնույթ կրող փոխադարձ ոգնության եֆեկ-տիվ պակտ ազդեցությանի դեմ, յերաշխափորել Անգլիայի, Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի կողմից Կենտրոնական և Արևելյան Յեվրոպայի պետություններին, ԽՍՀՄ սահմանակից յեվրո-պական բոլոր յերկրներին, առանց բացառության, ազդե-սորների հարձակումից: Կոնկրետ համաձայնություն կնքել Անգլիայի, Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի միջև անհապաղ ու եֆեկտիվ այն ոգնության ձևերի ու չափի մասին, վորը ցույց են տալու միմյանց և յերաշխափորվող պետություն-ներին ազդեցությունների հարձակման դեպքում:

Այս է մեր կարծիքը, վորը մենք վոչ վոքի վզին չենք փաթաթում, բայց վորի կողմն ենք կանգնած: Մենք չենք պահանջում ընդունել մեր տեսակետը և վոչ վոքին չենք խնդրում այդ մասին: Սակայն մենք գտնում ենք, վոր այդ տեսակետն իրոք համապատասխանում է խաղաղասեր պե-տությունների անվտանգության շահերին:

Դա կլինե՞ր բացառապես պաշտպանական բնույթ կրող համաձայնություն, վոր կգործեր ազդեցությունների կողմից կատարվող հարձակման դեմ և արմատապես կտարբերվեր ռազմական ու հարձակողական այն դաշինքից, վորը վեր-

ջերս կնքեցին միմյանց հետ Գերմանիան և Իտալիան: Հասկանալի յե, վոր այդպիսի համաձայնության հիմքն և կազմում փոխադարձության և հավասար պարտականու-թյունների սկզբունքը:

Պետք է նշել, վոր անգլո-ֆրանսական միջանկ առա-ջարկների մեջ այդ տարրական սկզբունքը բարեհաճ վերա-բերմունք չգտավ: Ապահովելով իրենց՝ ազդեցությունների ուղ-ղակի հարձակումից, միմյանց հետ ու Լեհաստանի հետ փո-խադարձ ոգնության պակտեր կնքելով և ապահովելով իրենց համար ԽՍՀՄ ոգնությունը՝ ազդեցությունների Լեհաս-տանի և Ռումինիայի վրա հարձակվելու դեպքում, անգլիա-ցիները և ֆրանսացիները բաց ելին թողնում այն հարցը, թե կարո՞ղ է արդյոք ԽՍՀՄ-ն իր հերթին ոգնություն սպասել նրանցից, ազդեցությունների կողմից նրա վրա ուղղակի հարձակում կատարվելու դեպքում, ինչպես և բաց ելին թողնում այն հարցը, թե կարո՞ղ են արդյոք նրանք մաս-նակցել ԽՍՀՄ-ի սահմանակից այն փոքր պետությունների ապահովմանը, վորոնք ծածկում են ԽՍՀՄ հյուսիս-արև-մտյան սահմանները, յեթե նրանք ի վիճակի չլինեն պաշտ-պանել իրենց չեղդությունը ազդեցությունների հարձակումից:

Այդպիսով ԽՍՀՄ-ի համար անհավասար դրություն եր ստացվում:

Վերջին որերս ստացվեցին անգլո-ֆրանսական նոր առաջարկներ: Այդ առաջարկների մեջ արդեն ընդունվում է Անգլիայի, Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի միջև փոխադարձ ոգ-նության սկզբունք փոխադարձության պայմաններով՝ ազ-րեսությունների ուղղակի հարձակման դեպքում: Դա, իհարկե, մի քայլ է դեպի առաջ: Թեպետ պետք է նկատել, վոր այդ սկզբունքն այնպիսի վերապահումներ ունի—ընդհուպ մինչև վերապահումն Ազգերի Լիգայի կանոնադրության միջանկ կետերի նկատմամբ—վոր նա կարող է հանդիսանալ ֆիկտիվ քայլ դեպի առաջ: Ինչ վերաբերում է Կենտրոնական և Արևելյան Յեվրոպայի յերկրների յերաշխափորման հարցին, ապա այստեղ վերոհիշյալ առաջարկները վոչ մի առաջադե-մություն չեն անում, յեթե գործին նայենք փոխադարձու-թյան տեսակետից: Նրանք նախատեսում են ԽՍՀՄ ոգնու-թյունը այն հինգ յերկրների նկատմամբ, վորոնց անգլիացիք

և Փրանսացիք՝ արդեն յերաշխալորության խոստում են տալի, բայց դրանք վոչինչ չեն առում իՍՀՄ հյուսիս-արևմտյան սահմանի այն յերեք յերկրներին իրենց ցույց տալիք ողնության մասին, վորոնք կարող են ի վիճակի չլինել պաշտպանելու իրենց չեզոքությունը ազերստորների հարձակման դեպքում:

Բայց Սորհրդային Միությունը չի կարող իր վրա պարտավորություններ վերցնել մատնանշված հինգ յերկրների նկատմամբ, առանց յերաշխիք ստանալու այն յերեք յերկրների նկատմամբ, վորոնք դանվում են նրա հյուսիս-արևմտյան սահմանում:

Այս դրության մեջ է Անգլիայի և Ֆրանսիայի հետ վարվող բանակցությունների գործը:

Բանակցություններ վարելով Անգլիայի և Ֆրանսիայի հետ, մենք բնավ անհրաժեշտ չենք համարում հրաժարվել գործարար կապեր ունենալուց այնպիսի յերկրների հետ, ինչպիսիք են Գերմանիան և Իտալիան: Դեռ անցյալ տարվա սկզբներին, գերմանական կառավարության նախաձեռնությամբ, բանակցություններ սկսվեցին առևտրական համաձայնության և նոր վարկերի մասին: Այն ժամանակ Գերմանիայի կողմից մեկ առաջարկ էր արված 200 միլիոն մարկ նոր վարկ տալու մասին: Վորքան վոր այդ նոր տնտեսական համաձայնության պայմանների մասին մենք այն ժամանակ համաձայնության չեկանք, ասլա հարցը վերացվեց: 1938 թվականի վերջերին գերմանական կառավարությունը նորից հարց դրեց տնտեսական բանակցությունների և 200 միլիոն մարկ վարկ տալու մասին: Ընդամեն Գերմանիայի կողմից պատրաստակամություն էր հայտնվել մի շարք գեղումներ անելու: 1939 թվականի սկզբներին Արտաքին Առևտրի ժողովոմատը իրազեկ էր դարձվել, վոր այդ բանակցությունների համար Մոսկվա յե մեկնում գերմանական հատուկ ներկայացուցիչ պ. Շնուրեն: Բայց հետո պ. Շնուրենյի փոխարեն այդ բանակցությունները հանձնարարվեցին Մոսկվայի գերմանական դեսպան պ. Շուլենբուրգին, բանակցություններ, վորոնք ընդհատվեցին տարաձայնությունների պատճառով: Դատելով մի քանի նշաններից, չի բացառված, վոր բանակցությունները կարող են վերսկսվել:

Կարող եմ նաև ավելացնել, վոր Իտալիայի հետ վերջերս ստորագրվեց յերկու յերկրների համար ել ձեռնառու առևտրական համաձայնագիր 1939 թվականի համար:

Ինչպես հայտնի յե, ընթացիկ տարվա փետրվար ամսին հրապարակվել էր մի հատուկ հաղորդագրություն, վորը հաստատում է բարի հարևանական հարաբերությունների զարգացումը իՍՀՄ-ի և Լեհաստանի միջև: Լեհաստանի հետ մեր ունեցած փոխհարաբերությունների մեջ պետք է արձանագրել վորոշ ընդհանուր բարեկամում: Մյուս կողմից մարտ ամսին կնքված առևտրական համաձայնագիրը կարող է նշանակել իրեն բարձրացնել իՍՀՄ-ի և Լեհաստանի միջև ավարանքաշրջանառությունը:

Մեր հարաբերությունները բարեկամական Թյուրքիայի հետ զարգանում են նորմալ կերպով: Ընկ. Պոտյոմկինի վերջերս ունեցած ուղևորությունը դեպի Անկարա՝ ինֆորմացիոն նպատակներով, դրական մեծ նշանակություն ունեցավ:

Միջազգային կյանքի այն հարցերից, վորոնք վերջին ժամանակներս մեծ նշանակություն ստացան իՍՀՄ-ի համար, պետք է կանգ առնել Ալանդական կղզիների պրոբլեմի վրա: Դուք գիտեք, վոր այդ կղզիներն տալիս քան հարյուր տարվա ընթացքում պատկանում էյին Ռուսաստանին: Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով Ֆինլանդիան անկախություն ստացավ: Մեր յերկրի հետ կնքած պայմանագրով Ֆինլանդիան ստացավ նաև Ալանդական կղզիները: 1921 թվականին տասը յերկրներ՝ Ֆինլանդիան, Եստոնիան, Լատվիան, Լեհաստանը, Շվեդիան, Դանիան, Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան ստորագրեցին մի Կոնվենցիա, վորն ինչպես և առաջ, արգելում է սպառազինել Ալանդական կղզիները: Կապիտալիստական յերկրների կառավարություններն այդ բանն արին առանց խորհրդային ներկայացուցիչների մասնակցության: 1921 թվականի պատերազմից և ստարերկրյա ինտերվենցիայից թուլացած Սորհրդային Հանրապետությունը կարող էր միայն բողոքել իՍՀՄ-ի նկատմամբ կատարված այդ ապրքինի ահաբեկում: Բայց այն ժամանակ ել մեր կողմից պարզ և քանիցս հայտարարվեց, վոր Սորհրդային Միությունը չի կարող այդ

հարցից հեռու մնալ, վոր Ալանդական կղզիներէ իրաւական ստատուութը չի կարելի փոխել՝ ի խախտումն մեր յերկրի շահերի:

Ալանդական կղզիներէ կարեւորութիւնը նրանց ստրատեգիական դրութիւնն եւ Բալթիկ ծովում: Ալանդական կղզիներէ սպառազինութը կարելի յե ոգտադործել ԽՍՀՄ-ին թշնամի նպատակներով: Գտնվելով Ֆիննական ծոցի մուտքի մոտ, սպառազինված Ալանդական կղզիները կարող են ծառայել այն բանին, վոր ԽՍՀՄ-ի համար փակվեն Ֆիննական ծոցի մուտքն ու յեղը: Այդ պատճառով այժմ, յերր Ֆիննական կառավարութիւնը Շվեդիայի հետ միասին ուղում ե իրադործել Ալանդական կղզիներէ սպառազինման մեծ պլանը, Խորհրդային կառավարութիւնը Ֆիննական կառավարութիւնից տվյալներ պահանջեց ծրագրված սպառազինութիւնների նպատակի ու բնույթի մասին: Փոխանակ Խորհրդային Միության միանգամայն բնական այդ ցանկությանն ընդառաջելու, Ֆիննական կառավարութիւնը հրաժարվեց ԽՍՀՄ-ին համապատասխան տեղեկութիւններ ե պարզարանումներ տալուց: Ընդամին ռազմական գաղտնիքի նկատմամբ արված վկայակոչումները, ինչպես դժվար չե հասկանալ, բոլորովին համոզիչ չեն: Չե՞ վոր Ֆիննական կառավարութիւնն Ալանդական կղզիները սպառազինելու իր պլանը հաղորդեց մի այլ կառավարության՝ Շվեդիայի կառավարության: Յեւ վոչ միայն հաղորդեց, այլե մասնակից դարձրեց նրան սպառազինումների այդ ամբողջ պլանի իրականացմանը: Այնինչ, 1921 թ. Կոնվենցիայի համաձայն, Շվեդիան այդ կողմից վոչ մի առանձին իրավունքներ չի վայելում: Մյուս կողմից, Խորհրդային Միության շահագրգռվածութիւնը Ալանդական կղզիների սպառազինման հարցում վոչ միայն պակաս չե, այլ ավելի յե, քան Շվեդիայինը:

Ֆիննական եւ չվեական կառավարութիւնների առաջարկությամբ, 1921 թ. Կոնվենցիան վերանայելու հարցը քննարկվում եր Ազգերի Լիգայի հենց նոր ավարտված Խորհրդում, առանց վորի սանկցիայի այդ Կոնվենցիան չի կարող վերանայվել, վորովհետեւ տասը պետութիւնների Կոնվենցիան կնքված ե յեղել Ազգերի Լիգայի Խորհրդի 1921

Թվականի հունիսի 24-ի համապատասխան վորոշման հիմունքով: Նկատի ունենալով Խորհրդային Միության ներկայացուցչի կողմից արված առաքելութիւնները՝ Լիգայի Խորհրդում չե կարող Խորհրդի վորոշման համար անհրաժեշտ միաձայնութիւն լինել: Լիգայի Խորհրդում տեղի ունեցած քննարկման արդիւնքները հայտնի յեն: Ազգերի Լիգայի Խորհուրդը հավանութիւն չտվեց Ֆիննական լիգայի ե Շվեդիայի առաջարկությանը: Նա սանկցիա չտվեց 1921 թվականի Կոնվենցիայի վերանայմանը: Յերեւի, Ֆիննական կառավարութիւնն այդ դրութիւնից համապատասխան յեզրակացութիւն կանի: Վերջին ժամանակներս միջադեպին իրադարձութիւնների լույսի տակ ալանդական հարցը Խորհրդային Միության համար առանձնահատուկ լուրջ նշանակութիւն ե ստացել: Մենք հնարավոր չենք համարում հաշտվել ԽՍՀՄ շահերի վորեւե չափով անտեսում թույլատրելու հետ տվյալ հարցում, վորը մեծ նշանակութիւն ունի մեր յերկրի պաշտպանության համար:

Բոլորովին համառոտակի կանգ կառնեմ Հեռավոր Արեւելքի հարցերի ե Յապոնիայի հետ ունեցած մեր հարաբերութիւնների վրա:

Այստեղ այս տարի ամենից շատ նշանակութիւն ունեցան մեր բանակցութիւնները Յապոնիայի հետ ձկնորսության հարցի մասին: Ինչպես հայտնի յե, Պրիմորյեյում, Ռիոտյան ծովում, Սախալինում ե Կամչատկայում յապոնացիք մեզանում ունեն մեծ թվով ձկնորսարաններ: Անցյալ տարվա վերջին նրանք արդեն ունեյին 384 ձկնորսական տեղամասեր: Մինչդեռ Կոնվենցիայի ժամկետը, վորի հիման վրա յապոնացիք ստացել եյին այդ ձկնորսական տեղամասերը, արդեն լրացել ե: Շատ ձկնորսական տեղամասերի նկատմամբ անցել են վարձակալության նաեւ առաջուց սահմանված ժամկետները: Այդ կապակցությամբ Խորհրդային կառավարութիւնը ձկնորսական հարցով բանակցութիւնների մեջ մտավ Յապոնիայի հետ: Մեր կողմից հայտարարվեց, վոր վորոշ թվով տեղամասեր, վորոնց վարձակալության սահմանված ժամկետը լրացել ե, այլեւ չեն կարող տրամադրվել յապոնացիներին, նկատի ունենալով մեր ունեցած ստրատեգիական նկատառումները: Չնայած մեր դիրքի

ակներեորեն հիմնավորված լինելուն, յապոնական կողմից խորհրդային տեսակետին մեծ ղեմադրությունն ցույց տրվեց: Յերկարատե բանակցությունների հետևանքով 37 ձրկնորսական տեղամասեր հետ վերցվեցին յապոնացիներից, իսկ ուրիշ տեղերում նրանց հանձնվեց 10 նոր տեղամաս: Դրանից հետո կոնվենցիայի գործողության ժամկետը յերկարացվեց ելի մեկ տարով: Յապոնիայի հետ ձկնորսության հարցի վերաբերյալ կայացած այս համաձայնությունը քաղաքական մեծ նշանակություն ունի: Առավել ևս, վոր յապոնական ռեակցիոն շրջանների կողմից ամեն ինչ արվել էր, վորպեսզի ընդգծվի այդ գործի քաղաքական կողմը, ընդհուպ մինչև ամեն տեսակի սպառնալիքները: Յապոնական ռեակցիոնները, սակայն, մեկ անգամ ևս կարող էին համոզվել, վոր խորհրդային Միության վերաբերմամբ սպառնալիքները նպատակին չեն հասնում (բուռն ծափահարություններ), իսկ խորհրդային պետության իրավունքներն ամուր պաշտպանության տակ են գտնվում (բուռն ծափահարություններ):

Այժմ սահմանային հարցերի մասին: Կարծում եմ, արդեն ժամանակն է՝ հասկանալու, ում այդ հարկավոր է, վոր խորհրդային Կառավարությունը չի կարող հանդուրժել իր սահմանների վրա վորևե պրոպոկացիա յապոնա-մանջուրական դորամասերի կողմից: Այժմ հարկավոր է այդ մասին հիշեցնել նաև Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության սահմանների նկատմամբ: ԽՍՀՄ և Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության միջև գոյություն ունեցող փոխադարձ ոգնության պայմանագրի ուժով մենք մեր պատանդությունն ենք համարում Մոնղոլական Ժողովրդական Հանրապետությանը հարկավոր ոգնությունն ցույց տալ նրա սահմանների պահպանման գործում: Մենք լուրջ ենք վերաբերվում այնպիսի բաներին, ինչպիսին փոխադարձ ոգնության պայմանագրին է, վոր ստորագրվել է խորհրդային Կառավարության կողմից: Յես պետք է նախազգուշացնեմ, վոր Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության սահմանը, մեր միջև կնքված փոխադարձ ոգնության պայմանագրի համաձայն, մենք պետք է պաշտպանենք նույնքան մճռականորեն, ինչպես և մեր սեփական սահմանը (բուռն ծափահար-

ություններ): Ժամանակն է հասկանալու, վոր Յապոնիայի դեմ աղբյուրային մեղադրանքները, վոր Յապոնիան առաջադրում է Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության կառավարությանը, ծիծաղելի չեն և անխո: Ժամանակն է նաև հասկանալու, վոր ամեն մի համբերություն իր սահմանն ունի (ծափահարություններ): Դրա համար ել ավելի լավ է ժամանակին վերջ տալ ԽՍՀՄ և ՄԺՀ սահմաններում յապոնա-մանջուրական դորամասերի կողմից շարունակ նորից ու նորից կրկնվող պրոպոկատորական խախտումներին: Համապատասխան նախազգուշացում մենք արել ենք նաև Մոսկվայի յապոնական դեսպանի միջոցով:

Յես անհրաժեշտությունն չունեմ խոսելու Ձինաստանի նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքի մասին: Դուք շատ լավ գիտեք ընկեր Ստալինի հայտարարությունը՝ աղբյուրային գոհ դարձած և իրենց հայրենիքի անկախության համար պայքարող Ժողովուրդներին ոգնելու մասին: Այդ լիակատար չափով վերաբերում է Ձինաստանին և աղբյուրային անկախության համար մղած նրա պայքարին: Մենք հետևողականորեն գործնականում կիրառում ենք այդ քաղաքականությունը: Դա համապատասխանում է այն խնդիրներին, վորոնք կանոնադրում են մեր առաջ Յեկրոպայում, այն է՝ աղբյուրային հետագա ծավալման դեմ խաղաղասեր տերությունների միասնական ճակատ ստեղծելու խնդիրներին: (Բուռն ծափահարություններ):

ԽՍՀՄ-ն այժմ այն չէ, ինչ վոր էր, ասենք, 1921 թվին, յերր նա նոր էր ձեռնամուխ լինում իր խաղաղ ստեղծագործական աշխատանքին: Հարկ է լինում դրա մասին հիշեցնել, վորովհետև մինչև այժմ նույնիսկ մեր հարևաններից մի քանիսը, ըստ յերևութին, չեն կարողանում այդ հասկանալ (ծիծաղ): Ձի կարելի չընդունել և այն, վոր ԽՍՀՄ-ն արդեն այն չէ, ինչ վոր էր ընդամենը 5—10 տարի սրանից առաջ, վոր ԽՍՀՄ-ի ուժերն ամրապնդվել են (ծափահարություններ): Խորհրդային Միության արտաքին քաղաքականությունը պետք է արտացոլի միջազգային իրադրության մեջ յեղած փոփոխությունները և ԽՍՀՄ-ի՝ վորպես խաղաղության հզոր Փակտորի՝ աճած դերը: Հարկ չկա ապացուցելու, վոր խորհրդային Միության արտաքին քաղաքակա-

նությունն արմատապես խաղաղասիրական է և ուղղված է ընդդեմ ագրեսիայի: Այդ ամենից լավ հայտնի յե հենց իրենց՝ ագրեսիվ յերկրներին (դաիլինում շարժում): Միջանի դեմոկրատական տերություններ մեծ ուշացումով և տատանումներով են դալիս այդ հասարակ ճշմարտության գիտակցությանը (դաիլինում աշխուժություն): Մինչդեռ ագրեսիայի դեմ կանգնող խաղաղասեր պետությունների միասնական ճակատում Խորհրդային Միությանը չի կարող տեղ չպատկանել առաջավոր շարքերում (ամբողջ դաիլինի բուն յերկարատև ծափահարություններ: Դեպուտատները վոտի յեն կանգնում և ովացիա սարքում ընկեր Մոլոտովին):

Հայերեն թարգմանության խմբագիր Պ. Պետրոսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Թրքագրիչ Վ. Զիդեջյան

Կոնսուլ սրբագրիչ Լ. Արուսյան

Գլավիտի լիազոր № 4—2463, հրատ. № 705

Պատվեր № 131, տիրաժ 5000, թղթի չափսը $84 \times 108 \frac{1}{32}$

(32.500 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 1 տպ. մամուլ, $\frac{1}{2}$ թերթ թուղթ.

Հանձնվել է տպագրության 28/VI 1939 թ.

Ստորագրվել է տպագրելու 9/VII 1939 թ.

Գինը 15 Կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,
Երևան, Ալլահիբեյլյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0977619

20 июл 1959

357

1959. 15 4

11

28536

В. М. МОЛОТОВ

О МЕЖДУНАРОДНОМ ПОЛОЖЕНИИ
И ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ СССР

Литература — Издательство полит. литературы
Ермитаж, 1959